Արձանագրության 3

« ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/146» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ

ք. Երևան

12.07.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Գյոզալյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Մովսիսյան, Ա. Խուդոյան, Ա. Գաբոյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ռ. Գյոզալյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց հարկային պարտավորություն:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ռ. Գյոզալյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/146 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ռ. Գյոզալյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/146» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել՝ չափաբաժին մասով Երևանի ոսկերչական գործարան-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ –ին, և վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաշվի առնելով, որ ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ անգործության ժամկետ կիրառելի չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Գյոզալյան

Անդամներ՝ ---------- Ա. Մովսիսյան

---------- Ա. Խուդոյան

---------- Ա. Գաբոյան

Քարտուղար՝ ---------- Վ. Մեժունց